

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՀՐԱՄ ՏՈՐԻԿԻ

ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ  
ՖԱՈՒՆԱՆ

Գ.00.08 - «Կենդանաբանություն» մասնագիտությամբ կենսաբանական  
գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

---

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АЙРАПЕТЯН ВАГРАМ ТОРИКОВИЧ

ФАУНА МЛЕКОПИТАЮЩИХ НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени доктора  
биологических наук по специальности 03.00.08 – “Зоология”

ЕРЕВАН – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնում

Գիտական խորհրդատու՝

կենսաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Է. Գ. Յավրույան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

կենսաբանական գիտությունների դոկտոր ,  
պրոֆեսոր **Վ. Վ. Գրիգորյան**  
կենսաբանական գիտությունների դոկտոր ,  
պրոֆեսոր **Ռ. Ս. Մխիթարյան**  
կենսաբանական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **Ս. Խ. Պիպոյան**

Առաջատար կազմակերպություն՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հունիսի 20-ին, ժամը 14.00-ին

ՀՀ ԲՈՎ-ի բուսաբանության և կենդանաբանության 035 մասնագիտական խորհրդի  
նիստում:

Հասցե՝ Երևան, 0014, Պ. Սևակի 7, էլ. փոստ՝ [zoohec@sci.am](mailto:zoohec@sci.am)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և  
հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գրադարանում, իսկ սեղմագրին՝ նաև  
[www.sczhe.sci.am](http://www.sczhe.sci.am) կայքում:

Սեղմագրին առաքված է 20 մայիսի 2014թ.

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
կենսաբանական գիտությունների թեկնածու՝

**Ա. Գ. Ղուկասյան**

---

Тема диссертации утверждена в Научном центре зоологии и гидроэкологии  
НАН РА

Научный консультант: доктор биологических наук, профессор

**Э. Г. Явруян**

Официальные оппоненты:

доктор биологических наук, профессор

**К. В. Григорян**

доктор биологических наук, профессор

**Р. С. Мхитарян**

доктор биологических наук, профессор

**С. Х. Пипоян**

Ведущая организация: Армянский государственный педагогический университет  
им. Х. Абовяна

Защита состоится 20 июня 2014г. в 14.00 часов

на заседании специализированного совета по ботанике и зоологии 035 ВАК РА.

Адрес: Ереван, 0014, ул. П. Севака 7, эл. почта: [zoohec@sci.am](mailto:zoohec@sci.am)

С диссертацией можно ознакомиться в библиотеке Научного центра зоологии и  
гидроэкологии НАН РА и на сайте [www.sczhe.sci.am](http://www.sczhe.sci.am)

Автореферат разослан 20 мая 2014 г.

Ученый секретарь специализированного совета,  
кандидат биологических наук

**А. Г. Гукасян**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Աշխատանքի արդիականությունը:** Արտադրության արագ զարգացումը, բնակչության աճը և քաղաքաշինության աճող գործընթացը հանգեցրել են ժամանակի մեկ արդիական հիմնախնդրի՝ բնական միջավայրի պահպանության: Այդ հիմնախնդրի լուծման հիմնական ճանապարհը առաջին հերթին բնական հարստությունների ռացիոնալ օգտագործումն է, որտեղ հատուկ արժեք են ներկայացնում վայրի կենդանիները:

Ղարաբաղի կաթնասունների (Mammalia) ֆաունան՝ թերիոֆաունան, տարածաշրջանում եզակի է իր բազմաթիվ առանձնահատկություններով: Նրա տեսակային կազմը հարուստ է ու բազմազան՝ բարդ ներտեսակային և միջտեսակային փոխհարաբերություններով, ինչը պայմանավորված է երկարատև յուրօրինակ պատմական ձևավորումով, լանդշաֆտային ծածկույթի և կլիմայական պայմանների բոլորությամբ, տարածքում արեալի եռաչափ տեղադրվածությամբ և այլն:

Կաթնասուններն իրենց էվոլյուցիայի ընթացքում ձեռք են բերել առանձնահատուկ և մեկը մյուսից խիստ տարբերվող կենսակերպ՝ մթնշաղագիշերային, թռչող, մագլցող, թաքնված, ստորգետնյա և այլն, ինչն էլ բավականին դժվարեցնում է դրանց բազմակողմանի ուսումնասիրությունները: Այս դասի մի շարք ներկայացուցիչներ իրենց կյանքի տարբեր շրջաններում (բազմացում, զարգացում, ծմեռային քուն) ընտրում են հաճախ դժվար, իսկ երբեմն էլ նաև անմատչելի բնակատեղեր:

Կաթնասունների յուրօրինակ կենսակերպը, մորֆոֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները, զարմանալի բարձր էկոլոգիական ճկունությունը, դրանց դերը բնության մեջ, մարդու կյանքում և առօրյայում ստիպում են կենսաբաններին, մասնավորապես թերիոլոգներին, լուրջ ուշադրություն դարձնել այս կենդանիներին:

Կովկասի, այդ թվում նաև Հարավային Կովկասի կաթնասունների ուսումնասիրման պատմությունը ունի մոտ 300-ամյա սահմանագիծ և հրատարակված են բազմաթիվ աշխատություններ, որոնցում քննարկվում է նաև Ղարաբաղի կաթնասունների ֆաունան (Յավրույան, Հայրապետյան, 2003ա, 2003բ; Дунник, 1914; Самушин, 1915, 1920; Даль, 1954; Верещагин, 1959; Соловьев, Темботов, 1989; Явруян, 1991): Սակայն նրանց տեսակային կազմի, կենսաբանության, էթոլոգիայի, մորֆոլոգիայի, էկոլոգիայի, հնէաբանության և մակաբուծաբանության վերաբերյալ տեղեկություններն առայսօր սուղ են և կարիք ունեն լուրջ լրացումների: Դրա պատճառները մի քանիսն են: Նախ Ղարաբաղը, ինչպես և ողջ Անդրկովկասը, կենդանաբանական ուսումնասիրությունների առումով բարդ տարածք է, ինչը պայմանավորված է լեռնային երկրին բնորոշ առանձնահատկություններով և տարածքում էկոլոգիական համակարգերի բազմազանությամբ: Աշխատանքը բարդանում է նաև նրանով, որ լեռնային լանդշաֆտներում կենդանաբանական ուսումնասիրությունների նպատակով կիրառվող մեթոդները և սկզբունքները լիարժեք չեն մշակված:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այստեղ, հայտնի քաղաքական պատճառներով, վաղուց ի վեր գիտական հետազոտություններ չեն իրականացվել: Մի քանի ոչ խոր տեղեկություններ պարունակող հոդվածները (Кузякин, 1950; Виноградов, Громов, 1952; Алиев, 1969; Алекперов, Ерофеева, Рахматулина, 1976; Алекперов, Алиев, Гудаятов, 1978) կրում են ֆրագմենտար բնույթ և Լեռնային Ղարաբաղի կաթնասունների ֆաունան ներկայացնել չեն կարող:

Ղարաբաղի կաթնասունների ֆաունան (բացառությամբ ձեռքաթևավորների) լուրջ ուսումնասիրության կարիք ունի, բացակայում են վերջնագրված տվյալներ կաթնասունների միգրացիաների ուղիների, վերարտադրողական ունակությունների և այլնի վերաբերյալ, որոնք խիստ անհրաժեշտ են դրանց ռացիոնալ օգտագործման, անհետացման եզրին գտնվող կենդանիների և էկոլոգիական համակարգերի պահպանման ուղիների մշակման, վնասատուների դեմ պայքարի արդյունավետ մեթոդների ընտրության, հողօգտագործման և անտառօգտագործման աշխատանքների լիարժեք կազմակերպման, համաձարակների բռնկմանն ու նման անցանկալի երևույթների կանխատեսման, վերացման և շատ այլ հարցերի լուծման համար:

**Աշխատանքի նպատակը:** Աշխատանքի հիմնական նպատակն է հնարավորինս համակողմանի հետազոտել և ներկայացնել Լեռնային Ղարաբաղի թերի հետազոտված կաթնասունների ֆաունան և էկոլոգիան, տալ նրա արդի վիճակի բնութագիրը, ինչպես նաև մշակել բնապահպանական և բնօգտագործման գիտականորեն հիմնավորված քաղաքականություն:

**Աշխատանքի հիմնական խնդիրներն են.**

1. Պարզաբանել Լեռնային Ղարաբաղի կաթնասունների տեսակային կազմը
  2. Ուսումնասիրել հետազոտվող կենդանիների տարածվածությունը, լանդշաֆտային և բարձրունքային բաշխվածությունը
  3. Վեր հանել ֆոնային, դոմինանտ, խոցելի տեսակները և նրանց բնապահպանական կարգավիճակը
  4. Բնութագրել ապրելավայրերը և ներկայացնել տարածման քարտեզներ
  5. Պարզել և ներկայացնել կաթնասունների միգրացիաների ուղիները
  6. Հետազոտել ակտիվության տիպերը, սեզոնային փոփոխությունները և ծմեռման վայրերը:
  7. Բնութագրել հիմնական պոպուլյացիոն ցուցանիշները (սեռական և հասակային կազմը, կյանքի տևողությունը, մահացությունը, բազմացման և զարգացման առանձնահատկությունները, սերնդատվության հաճախականությունը)
  8. Պարզել կաթնասունների թվաքանակի փոփոխության հիմնական պատճառները:
- միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերությունները, թշնամիները, մրցակիցները, մակաբույծները:

– մարդածին գործոնի ազդեցությունը կաթնասունների կենսակերպի և թվաքանակի վրա:

9. Գնահատել կաթնասունների տնտեսական նշանակությունը և օգտագործման հնարավորությունները Լեռնային Ղարաբաղի առանձին տարածքներում:

10. Մշակել վտանգված տեսակների և համակարգերի պահպանմանը ուղղված գիտականորեն հիմնավորված առաջարկներ:

**Աշխատանքի գիտական նորույթ:**

Առաջին անգամ Լեռնային Ղարաբաղի ամբողջ տարածքում իրականացվել են կաթնասունների ֆաունայի համալիր ուսումնասիրություններ:

Պարզվել է կաթնասունների տեսակային կազմը: Առաջին անգամ պարզաբանվել են Ղարաբաղի ֆաունայում ընդգրկված 94 տեսակի կաթնասունների կենսաբանական առանձնահատկությունները, պահպանության խնդիրները:

Ուսումնասիրության արդյունքում ստացված տվյալների հիման վրա մշակվել է նախագիծ և ներկայացվել ԼՂ կառավարություն՝ ԼՂՀ կենդանիների «Կարմիր գրքի» ստեղծման համար, որը լույս է տեսել 2012թ.:

Հետազոտվել են Ղարաբաղի կաթնասունների տարբեր տեսակների ուղղահայաց գոտիականությամբ տարածական բաշխվածությունը, նախընտրելի ապրելավայրերը, սեզոնային և մշտական կերահրապարակները:

Պարզաբանվել են մի շարք կաթնասունների ակտիվության օրական և սեզոնային տիպերը, մագափոխության բնույթը, որոշ տեսակների բազմացման ժամկետները, զարգացման, ցերեկային և ծմեռային քնի առանձնահատկությունները, կերաբաժնի կազմը և փոփոխությունը՝ կախված տարվա եղանակից, սննդի առատությունից և այլ գործոններից:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կաթնասունների միջտեսակային և ներտեսակային փոխհարաբերություններին, կապվածությամբ բնակատեղերին, գիշատիչ-զոհ, տեր-մակաբույծ հարաբերություններին:

Բացահայտվել և ցուցակագրվել են հետազոտվող տեսակների և դրանց թաքսոցներում հայտնաբերված մրցակիցները, համակիցները և մակաբույծները:

**Աշխատանքի գործնական արժեքը:**

Հետազոտվել է Ղարաբաղում տարածված կաթնասունների առանձին խմբերի տնտեսական նշանակությունը՝ դերը գյուղատնտեսության, անտառտնտեսության և համաճարակների ձևավորման ու տարածման մեջ:

Ղարաբաղում առաջին անգամ իրականացվել է կրծողների էկոլոգիայի ուսումնասիրություն: Կատարվել է կենդանիների թվաքանակի փոփոխության մոտավոր մոդելավորում, մշակվել են պայքարի կենսաբանական մեթոդների մեխանիզմներ, ԼՂ գյուղատնտեսության նախարարություն են ներկայացվել պայքարի հրահանգներ:

Պարզվել են մարդածին գործոնի ազդեցությունը և հետևանքները կաթնասունների էկոլոգիական առանձնահատկությունների վրա:

Մշակվել են անհետացման եզրին գտնվող կենդանիների պահպանության մեխանիզմները, առաջարկվել է պահպանվող տարածքների, անկանոն որսորդության և որսագողության դեմ պայքարի ծրագիր:

Ուսումնասիրությունների արդյունքները հնարավորություն կտան կանխատեսել և գնահատել Ղարաբաղի ֆաունայի փոփոխությունները հետագայում և ժամանակին նախաձեռնել պահպանական կամ գյուղատնտեսական և սանիտարա-համաճարաբանական համապատասխան միջոցառումներ:

**Պաշտպանության ներկայացվող հիմնադրույթները.**

Ղարաբաղի կաթնասունների ֆաունայի արդի վիճակի գնահատման ամփոփ տվյալներ.

- կենսաբազմազանության գնահատման արդյունքները (ֆոնային, դոմինանտ, խոցելի տեսակները և նրանց բնապահպանական կարգավիճակը
- կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները
- որակական և քանակական փոփոխությունների հիմնական պատճառները
- տնտեսական նշանակությունը և օգտագործման հնարավորությունները Լեռնային Ղարաբաղի առանձին տարածքներում
- վտանգված տեսակների և համակարգերի պահպանմանը ուղղված առաջարկները:

**Աշխատանքի փորձաշակաստիությունը:** Ատենախոսության արդյունքները զեկուցվել են ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի սեմինարներում, քիմիա-կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդում (1999-2013), միջազգային գիտապրակտիկ գիտաժողովներում (Международ. конфер. “Зоол. исслед. в Росс. u сопред. территор.”, 1 июня, Н. Новгород, 2002; X-th European bat Research symposium, 12-16 August, 2005, National University of Ireland, Galway; Международ. конфер. “Млекопитающие горных территоріу”, 13-18 августа, Москва, 2007; Advances in the biology of shrews III, September 14-17, 2010; Syktyvkar, Komi Republik, Russia, Moscow-2010; Международ. науч. конфер. “Биологическое разнообразие u проблемы охраны фауны Кавказа”, Ереван, 2011, 26-29 сентября; Междунар. науч. конфер. “Современные проблемы экологического u органического сельского хозяйства”, Ереван, ГАУА, 2012; Международ. научно-практическая конфер. “Экология, эволюция u систематика животных”, Рязань, 2012; XIV международ. науч. конфер. “Биологическое разнообразие Кавказа u Юга России” посвященной 70-летию со дня рождения Гауирбега Магомедовича Абдурахманова (Махачкала, 5-7 ноября 2012 г.); Международ. науч. конференция (7-8 ноября), НАУА, 2013; XV международ. науч. конфер. «Биологическое разнообразие Кавказа u юга России», (Махачкала, 5-6 ноября 2013 г.):

**Հրապարակումները:** Հետազոտությունների արդյունքները արտացոլված են 36 գիտական հրապարակումներում:

**Աշխատանքի կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 5 գլուխներից, եզրակացություններից և հավելվածից: Ատենախոսությունը շարադրված է համակարգչային շարվածքի 289 էջից, պարունակում է 94 քարտեզ, 1 աղյուսակ: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 425 հայրենական և արտասահմանյան անվանում: Հավելվածում (214 էջ) ընդգրկված է 23 քարտեզ, 100 աղյուսակ, 199 դիագրամա, 30 լուսանկար:

## **ԳԼՈՒՆ I. ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԸՆԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԼԱՆՂՉԱՖՏԱ-ՖԱՈՒՆԻՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Այս գլխում վերլուծվում է լեռնային Ղարաքաղի հանրապետության (ԼՂՀ) աշխարհագրական դիրքն ու տեղադրությունը, ընդհանուր մակերևույթը, Հայաստանի Հանրապետության հետ ընդհանուր սահմանները: Պարզաբանվում են նաև ԼՂՀ ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները, ջրագրությունն ու լեռնագրությունը և լանդշաֆտային գոտիների կենսաբազմազանությունը, ԼՂՀ կաթնասունների հետազոտման պատմությունը և գրական տվյալները:

## **ԳԼՈՒՆ II. ՆՅՈՒԹԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ**

Աշխատանքում քննարկվում է Ղարաքաղի բոլոր ֆիզիկա-աշխարհագրական շրջաններում և լանդշաֆտներում իրականացված 1999-2013-թթ. ժամանակաշրջանի ուսումնասիրությունների արդյունքները: Նյութի հավաքը և դիտարկումները կատարվել են ստացիոնարներում (տևողությունը ավելի քան մեկ տարի՝ բոլոր սեզոններին), կիսաստացիոնարներում (մեկ տարվա ընթացքում, այցելությունները կատարվել են պարբերաբար): Որպես ստացիոնարներ ընտրվել են Մարտակերտի շրջանում՝ Սարսանգի ջրամբարի և Թարթառ գետի ստորին հոսանքի, Քարվաճառի շրջանում՝ Ղաղիվանքի, Եղջատեղի, Կորեկնեկի, Քաշաթաղի շրջանում՝ Ղազարապատի, Մարտիրոսի, Շալուաի, Հաղրութի շրջանում՝ Ազիսի, Առաքյալի, Իշխանաձորի, Շուշիի կիրճի տարածքները: Կիսաստացիոնարների համար ընտրվել են Ասկերանի շրջանում՝ Իվանյանի, Խրամորթի, Կարմիր գյուղի, Ավետարանոցի, Մարտունու շրջանում՝ Ջիվանիի, Սոսի, Թաղավարդի, ինչպես նաև Ստեփանակերտի մերձքաղաքային տարածքները:

Դիտարկվել և մշակվել են Ղարաքաղում տարածված կաթնասունների վեց կարգերին (Insectivora, Chiroptera, Rodienta, Logomorpha, Carnivora, Artiodactyla) պատկանող 16507 կենդանիներ (մշակած թվաքանակից մորֆոմետրիկ չափումները կատարվել են 10019 առանձնյակների վրա):

Այստեղ ընդգրկվել է նաև կենդանիների այն թվաքանակը, որոնք օդակավորումից, նշադրումից և արտաքին տվյալների ուսումնասիրությունից հետո ազատ են արձակվել՝ տվյալ տարածքում էկոլոգիական դինամիկ հավասարակշռությունը պահպանելու համար: Օգտագործվել են նաև ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի, Ղարաբաղի դպրոցների, Արցախի պետական համալսարանի թանգարանային նմուշները, առանձին անհատների, որսորդների, մորթու մշակությամբ զբաղվողների, Ղարաբաղի տարբեր շրջանների համաճարակաբանական կենտրոնների, Հադրութի հակաժանտախտային կայանի, ԵՊՀ և Սլավոնական հմալսարանների, պրոֆեսոր Է.Գ. Յավրույանի, Գ.Յու. Պապովի, Ս.Ս. Բալոյանի, Ա.Ս. Ղազարյանի, Ա.Ա. Ավագյանի, Ա. Վիրաբյանի և մեր անձնական հավաքածուները, ինչպես նաև ավտոմեքենաների անիվների տակ ընկած, սատկած կամ որսագողերի կողմից սպանված կենդանիները:

Նյութի հավաքման, մշակման և դաշտային դիտարկումների ժամանակ օգտվել ենք թերիալոգիայում և էկոլոգիայում ընդունված դասական մեթոդներից (Кузьякин 1950, 1961, 1970, 1974; Новиков, 1953; Макфедьен 1965; Одум 1986; Кола 1979; Бурон, Харнер, Таунсенд, 1989 (m.1,2); Thomas, La Val 1988; Kunz et al., 1996; Ивашкин и др., 1971, Мегаран, 1992): Մեթոդի ընտրությունը կախված է եղել տեղանքի դիրքից, լանդշաֆտից և գոտիականությունից, ինչպես նաև տեսակի առանձնահատկություններից: Առանձին դեպքերում, կախված կենդանատեսակից, դրանց բնակատեղերի դիրքից և եղանակային պայմաններից օգտագործվել են տարբեր տիպի ցանցեր, մետաղյա, պլաստիկ կամ փայտյա տարբեր չափսի և կառուցվածքի ինչպես աղեղնաձև, այնպես էլ կենդանորս թակարդներ: Ստորգետնյա կենսակերպ վարող կենդանատեսակների համար օգտագործվել են լարային օղակներ (խարսխակառան): Կենդանիների որսի համար առանձին դեպքերում (մասնավորապես գետնափորների ընտանիքի) օգտագործել ենք պլաստմասե 1 կամ 1,5 լիտրանոց շշեր, որոնց վերին մասը կտրել ենք և շշի երկարությամբ փորել հողը ու այն տեղադրել փոսում: Շշի մեջ տեղադրվել է խայծը և ծղոտից «կամուրջ» պատրաստվել: մեր կողմից կիրառված այս մեթոդը բավականին շահավետ է գետնափորներով խիտ բնակեցված վայրերում: Որոշ դեպքերում օգտագործվել են տարբեր տրամաչափի, երկարության և կառուցվածքի պլաստիկ խողովակներ, մասնավորապես միջատակերներ, որոշ կրծողներ և մանր գիշատիչներ որսալու համար:

Մանր կաթնասունների (կրծողներ, միջատակերներ) հարաբերական հաշվարկը համակեցություններում կատարվել է թակարդ/օր մեթոդով (Հայրապետյան, 2006ա; Карачева, Телуцына, 1998): Թակարդները տեղադրել ենք ուղիղ գծով, մեկը մյուսից 5 մ հեռավորության վրա՝ ստանդարտ (հաց և բուսական յուղ) և առանձնահատուկ (միս, ձկնամթերք և այն) պատրաստված խայծով: Թակարդները թողել ենք մեկ՝ երբեմն երկու օր: Կենդանիների հաշվարկը կատարել ենք թերիալոգիայում ընդունված հետևյալ բանաձևով՝  $J = C / (A \times T) \times 100\%$ , որտեղ C-ն՝ «T» օրում որսված առանձնյակների թիվն է, A-ն՝ թակարդների ընդհանուր թիվը, T-ն՝ որսի

օրերի թիվը: Յուրաքանչյուր որսված տեսակի հաշվարկի միջին սխալը (Mi)

որոշվել է հետևյալ բանաձևով 
$$M_i = \sqrt{\frac{N - W_i}{N}}$$
, որտեղ N-ն կենդանիների

ընդհանուր թիվն է, W<sub>i</sub>-ին տվյալ i տեսակի կենդանիների թիվը:

Կենդանիների բազմացման առանձնահատկությունները որոշվել է հերձման ժամանակ (Тышкова, 1964): Միաժամանակ կատարվել են ընդունված մորֆոմետրիկ չափումները, կենդանիներին կշռել ենք, գանգը՝ ֆիքսել ֆորմալինում կամ եփել և մաքրել մկաններից: Տարբեր տեսակների անհատական տարիքը որոշվել է տարբեր մեթոդներով: Մկներից՝ մարմնի քաշով, գեներատիվ օրգանների վիճակով և ատամների մաշվածության աստիճանով (Тышкова, 1964), գորշատամների մոտ հաշվի ենք առել ատամների մաշվածության աստիճանը, ականջների, թաթերի և պոչի մազակալվածությունը (Долгов, 1985), ձեռքաթևավորների մոտ, ինչպես ատամների մաշվածությամբ, այնպես էլ արտաքին մորֆոլոգիական հատկանիշներով (Явряя, Аурпанемя, Понов, 2003): Մանր կաթնասունների համակեցությունների նմանությունը գնահատվում են նմանության ինդեքսով՝  $S = 2C / (A + B)$ , որտեղ A-ն՝ «A» փորձում տեսակների թիվն է, B-ն՝ «B» փորձում տեսակների թիվըն է, C-ն՝ երկու փորձում ընդհանուր տեսակների թիվն է: Համապատասխանաբար համեմատվող խմբերի ոչ նմանության ինդեքսը այդ դեպքում կլինի «1-S» (Дампушев, 2001; Мэгараа, 1992): Մորֆոմետրիկ չափումների մշակումները կատարվել են կենդանաբանության մեջ ընդունված դասական մեթոդներով (Лакун, 1990): Տվյալ վայրերում ձեռքաթևավորների առկայությունը և դրանց տեսակը որոշվել է ուլտրաձայնային Pettersson D-200 տիպի դետեկտորի օգնությամբ (Явряя, Понов, Аурпанемя, Гзраряя, 2002): Պատերի ձեղքերից ձեռքաթևավորներին հանելու համար օգտագործել են տարբեր չափերի ունելիներ կամ ծայրում օղակ ունեցող հատուկ սարքավորումներով: Տարբեր սեռահասակային խմբերի կենդանիների կշռումները իրականացվել են էլեկտրոնային և խողովակածն կշեռքների օգնությամբ: Ձեռքաթևավորները օղակավորվել են պլաստիկ կամ ալյումինե X, Y կամ P օղակներով: Կրծողների և միջատակերների տեղաշարժերը որոշելու նպատակով կատարվել է նշադրում՝ համապատասխան հերթականությամբ եղունգների կտրումով: Կրծողների գործող բների հաշվառումը կատարվել է տարածքում եղած բնանջների տրորման ընդունված եղանակով, իսկ հաջորդ օրը հաշվարկել բաց բնանջքերը: Հետազոտվող բոլոր կենդանատեսակների ապրելավայրերի բարձրությունը ուղղահայաց գոտիականությամբ որոշվել է Magellan GPS-315-ի օգնությամբ:

Ստացված մորֆոմետրիկ արդյունքների հավաստիության գնահատման համար օգտագործվել են Ստյուդենտի չափանիշները:

Կենդանիների այն նմուշները (գորշատամներ, սպիտակատամներ, մկնանման կրծողներ, մասնավորապես՝ փոքր գորշատամ, փոքր

սպիտակատամ, արևելապարսկական սպիտակատամ, փոքրասիական համստեր, թիուտային դաշտամուկ, վինոգրադովի ավազամուկ), որոնց տեսակային պատկանելությունը կասկածներ է առաջացրել, ուղղարկվել են Լեհաստանի կենդանաբանության ինստիտուտի գենետիկայի լաբորատորիա (Վարշավա)՝ կզդ, պրոֆեսոր Վ. Բոգդանովիչին: Նյութի վերահաստատումից հետո նրա մասին տեղեկությունները ներառվել են մեր աշխատանքում (Pilot M., Dabrowski M. J., Hayrapetyn V., et all, 2014):

**Օգտագործված հապավումները.** ՄԵ - մարմնի երկարությունը, ՊԵ - պոչի երկարությունը, ԳԸԵ - գլխի ընդհանուր երկարությունը, ԳԿԵ- գանգի կոնդիլոբազալ երկարությունը, ԱԵ - ականջների երկարությունը, ԱԿԲ- ականջի բարձրությունը, Մլ-միջաչքային լայնությունը, ԱՎՇԵ - ատամների վերին շարքի երկարությունը, ԱՍՇԵ -ատամների ստորին շարքի երկարությունը, ՀԹԵ -հետին թաթի երկարությունը, ԳԲ - գանգի բարձրությունը, ՔԵ - քթակրի երկարությունը, Ռոս.լ-ռոստրումի լայնությունը, ԳԱԼ-գլխի միջայտային լայնությունը, ԱԿԼ - ականջի լայնությունը, Պլ-պայտի լայնությունը, ՄԱՏ-միջաչքային տարածքը, ՆԲԵ - նախաբազուկի երկարությունը,

ԿԵ - կոզեյուկի երկարությունը, ԱԱդԵ - այտային աղեղի երկարությունը, ՍԾԵ- ստորին ծնոտի երկարությունը, Վ և ՍԴԵ- վերին և ստորին դիաստեմայի երկարությունը, ՄՆԴԲ- մնդավի բարձրությունը, Կր.փաթ-կրծքի փաթիղ:

ո-կենդանիների քանակը, mo-տողի փոքրագույնը (մինիմումը), Max -տողի առավելագույնը (մաքսիմումը), M- միջին թվաբանականը, m - միջին թվաբանականի միջին սխալը, σ - միջին քառակուսային շեղումը, Cv - վարիացիայի գործակիցը, tst - ստյուդենտի չափանիշը P -հավաստիության աստիճանը:

## **ՍԵՓԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ**

### **ԳԼՈՒԽ III. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Այս գլխում առանձին ակնարկների տեսքով ներկայացված են Ղարաբաղի կաթնասունների կենսաբանական և էկոլոգիական բնութագրերը (94 ակնարկ): Կատարվել է Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) կթնասունների ֆաունայի տեսակային կազմի վերլուծություն: Աշխատանքում ընդգրկված են տեղեկություններ Ղարաբաղում տարածված կաթնասունների կարգավիճակի, տարածվածության, բնակատեղերի, թվաքանակի և բաշխվածության վերաբերյալ: Բնութագրվում են տեսակների մեծամասնության օրական, սեզոնային ակտիվությունը, սննդի ու կերաբաժնի կազմը, բազմացման ժամկետները, սերնդի աճը և զարգացումը, քանակության փոփոխության դինամիկան, թշնամիները, մրցակիցները, մակաբույծները: Գնահատվել է նրանց կողմից հասցվող վնասի չափը:

Ընդհանուր առմամբ Ղարաբաղի տարածքում գրանցվել է 94 տեսակ (միջատակերների կարգի՝ 13, ձեռքաթևավորների՝ 27, կրծողների՝ 28,

նապաստակակերպների՝ 1, գիշատիչների՝ 20, կճղակավորների՝ 5 տեսակ):  
 ԼՂՀ կաթնասունների տեսակային կազմը ներկայացված է աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1**

**ԼՂՀ կաթնասունների տեսակային կազմը և բաշխվածությունը ըստ  
 լանդշաֆտային գոտիների**

N	Տեսակի անվանումը	Լանդշաֆտային գոտիները				
		Անապատային-կիսաանա-	Լեռնատափաստանային	Սևտառային	Մերձալպյան	Ագոնալ
1	2	3	4	5	6	7
1	Կարգ Միջատակերներ՝ Insectivora Ընտանիք Ոզնիներ՝ Erinaceidae Սեռ Ոզնիներ՝ Erinaceus <b>Տեսակ՝ սպիտակափող ոզնի</b> <i>Erinaceus transcaucasicus</i> )	+	+	+	-	+
2	Սեռ՝ Ականջեղ ոզնիներ (Hemiechinus) <b>Տեսակ՝ ականջեղ ոզնի (Hemiechinus auritus)</b>	+	+	-	-	+
3	Ընտանիք Խլուրդներ (Talpidae) Սեռ՝ Խլուրդ (Talpa) <b>Տեսակ՝ կովկասյան խլուրդ (Talpa caucasica)</b>	-	+	+	+	+
4	<b>Տեսակ -փոքր կամ կոյր խլուրդ-Talpa coeca</b>	+	+	+	+	-
5	Ընտանիք Չետնափորներ- Soricidae Սեռ գորշատամներ- Sorex <b>Տեսակ -կովկասյան գորշատամ- Sorex caucasica</b>	-	+	+	+	+
6	<b>Տեսակ -Ուորդեի գորշատամ- Sorex Raddei</b>	+	+	+	+	+
7	<b>Տեսակ -փոքր գորշատամ- Sorex minutes</b>	+	-	+	+	+
8	Սեռ ջրային սրննչակներ (կուտորաներ) Neomys <b>Տեսակ -Շելկովնիկովի կուտորա- Neomys Schelkovnikovi</b>	-	-	+	-	+
9	Սեռ բազմատամ սպիտակատամ-Suncus <b>Տեսակ- պստիկ սպիտակատամ- Suncus etruscus</b>	+	-	+	-	-
10	Սեռ սպիտակատամներ- Crocidura <b>Տեսակ- երկարապոչ սպիտակատամներ- Crocidura guldenstaedti</b>	-	+	+	+	+
11	<b>Տեսակ-փոքր սպիտակատամներ Crocidura suaveolens</b>	+	+	+	+	+
12	<b>Տեսակ -սպիտակափող սպիտակատամ- Crocidura . leucodon</b>	+	+	+	+	+

աղյուսակ 1-ի շարունակությունը					
13	<i>Տեսակ -արևելապարսկական սպիտակատամ - Crocidura zarudnyi</i>		+	+	+
14	Կարգ ձեռքաթևավորներ- Chiroptera Ընտանիք պայտաքթեր-Rhinolophidae Սեր պայտաքթեր-Rhinolophus <i>Տեսակ -մեծ պայտաքթի- Rhinolopus ferrumequinum</i>	+	+	+	+
15	<i>Տեսակ -փոքր պայտաքթի - Rhinolopus hipposideros</i>	+	+	+	-
16	<i>Տեսակ -Մեհելիի պայտաքթի- Rhinolopus Mehelyi</i>	+	+	+	-
17	<i>Տեսակ -հարավային պայտաքթի- Rhinolopus euryale</i>	+	+	+	-
18	<i>Տեսակ-միջերկրածովային պայտաքթի- Rhinolopus Blasii (Բլազիուսի)</i>	-	+	+	-
19	Ընտանիք հարթաքեր-Vespertilionidae Սեր գիշերաչղիկներ-Myotis <i>Տեսակ -Բեխշտեյնի գիշերաչղիկ-Myotis Bechsteini</i>	+	+	-	-
20	<i>Տեսակ -սրականջ գիշերաչղիկ- Myotis Blythi</i>	+	+	+	+
21	<i>Տեսակ -նաստերերի գիշերաչղիկ- Myotis Nattereri</i>	+	+	-	-
22	<i>Տեսակ -երազույն գիշերաչղիկ- Myotis emarginatus</i>	+	+	-	-
23	<i>Տեսակ -բեղավոր գիշերաչղիկ- Myotis mystacinus</i>	+	+	+	-
24	<i>Տեսակ -Ղաուրբենտոնի գիշերաչղիկ- Myotis Daubentoni</i>	-	+	+	+
25	Սեր երկարաթևեր Miniopterus <i>Տեսակ սովորական երկարաթև- Miniopterus Schreibersii</i>	+	+	+	-
26	Սեր ականջեղներ –Plecotus <i>Տեսակ - գորշ ականջեղ-Plecotus auritus</i>	+	+	+	+
27	<i>Տեսակ -մոխրագույն ականջեղ- Plecotus austriacus</i>	-	+	+	-
28	Սեր լայնականցներ-Barbastella <i>Տեսակ- եվրոպական լայնականց-Barbastella barbastellus</i>	+	+	-	-
29	<i>Տեսակ - սպիական լայնականց- Barbastella leucomelas</i>	+	+	+	-
30	Սեր իրիկնաչղիկներ- Nyctalus <i>Տեսակ- փոքր իրիկնաչղիկ- Nyctalus leisleri</i>	-	-	+	-
31	<i>Տեսակ - շիկակարմիր /շեկ/ իրիկնաչղիկ- Nyctalus noctula</i>	+	+	-	-
32	Սեր մաշկեղներ և փոքրաչղիկներ- Vespertilio /Pipistrelus/ <i>Տեսակ-երկզույն մաշկեղ- Vespertilio murinus</i>	+	+	+	-
33	<i>Տեսակ -ուշաթռչիք մաշկեղ- Eptesicus serotinus</i>	+	-	-	+

աղյուսակ 1-ի շարունակությունը						
34	<i>Տեսակ -Օզնիկ կամ անապատային մաշկեղ- Eptesicus bottae</i>	+	-	-	-	-
35	<i>Տեսակ - թզուկ փոքրաչղջիկ- Pipistrellus pipistrellus</i>	+	+	+	+	+
36	<i>Տեսակ - մաշկեղակերպ փոքրաչղջիկ- Pipistrellus savi</i>	+	+	+	-	-
37	<i>Տեսակ -միջերկրածովային կամ կուլիի փոքրաչղջիկ- Pipistrellus kuhlii</i>	+	+	-	-	+
38	<i>Տեսակ -Նատուգիուսի փոքրաչղջիկ- Pipistrellus Nathusii</i>	+	-	+	-	+
39	<i>Տեսակ -գաճաճ փոքրաչղջիկ- Pipistrellus pygmaeus</i>	+	+	+	+	+
40	Ընտանիք բուլղոզակերպեր- Mollosidae Սեր ծալքաշուրթեր-Tadarida <i>Տեսակ -լայնականոց ծալքաշուրթ-Tadarida teniotis</i>	-	+	+	-	+
41	Կարգ կրծողներ-Rodentia Ընտանիք վայրենակերպեր կամ մացառախոզեր- Hystricidae Սեր վայրենակերպեր-Hystrix <i>Տեսակ -հնդկական վայրենակերպ-Histrix indica</i>	+	+	+	-	+
42	Ընտանիք նուտրիաներ կամ ձահձակուղբեր – Mycastoridae Սեր նուտրիա- Myocastor <i>Տեսակ -ձահձակուղբ /նուտրիա/ -Mycastorida copus</i>	+	+	+	-	+
43	Ընտանիք սկյուռներ- Sciuridae Սեր սկյուռ- Sciurus <i>Տեսակ- պարսկական սկյուռ- Sciurus persicus</i>	+	+	+	+	+
44	Սեր գետնասկյուռ-Citellus <i>Տեսակ-եվրոպական գետնասկյուռ – Citellus citellus</i>	+	+	+	+	+
45	Ընտանիք քնամկներ-Muscardinidae Սեր մեծ քնամուկ-Glis <i>Տեսակ- մեծ քնամուկ- Glis glis</i>	+	+	+	+	+
46	Սեր անտառային քնամուկ- Dryomys <i>Տեսակ -անտառային քնամուկ-Dryomys nitedula</i>	+	-	-	-	-
47	Ընտանիք ձագարամկներ- Dipodidae Սեր գետնաձագարամկներ-Allactaga <i>Տեսակ- լեռնային գետնաձագարամուկ –Allactaga Williamsi</i>	+	+	+	-	-
48	<i>Տեսակ-փոքր ձագարամուկ - Allactaga elater</i>	+	+	+	-	-
49	Ընտանիք մկներ- Muridae Սեր տնային մկներ-Mus <i>Տեսակ- տնային մուկ- Mus musculus</i>	+	+	+	+	+


աղյուսակ 1-ի շարունակությունը						
50	Սեռ անտառային և դաշտամկների Apodemus (Sylvemus) <b>Տեսակ-անտառային մուկ- Apodemus sylvaticus</b>	+	+	+	-	+
51	<b>Տեսակ- դաշտամուկ- Apodemus agraris</b>	+	+	+	-	+
52	<b>Տեսակ- դեղնակուրցք մուկ- Apodemus flavicollis</b>	+	-	-	-	-
53	Սեռ Առնետներ-Rattus <b>Տեսակ- մոխրագույն առնետ (պայսյուկ)-Rattus norvegicus</b>	+	+	+	-	+
54	<b>Տեսակ-սև առնետ – Rattus rattus</b>	+	+	+	-	+
55	Սեռ համստերներ Cricetus <b>Տեսակ- սովորական համստեր - Cricetus cricetus</b>	+	+	-	-	-
56	<b>Տեսակ- փոքրասիական համստեր- Cricetus Brandt</b>	+	-	-	-	+
57	Սեռ համստերիկներ –Cricetulus <b>Տեսակ- մոխրագույն համստերիկ- Cricetus Migratorius</b>	+	+	+	-	-
58	Սեռ ավազամկներ-Meriones <b>Տեսակ- պարսկական ավազամուկ- Meriones persicus</b>	+	+	-	-	-
59	<b>Տեսակ- Վինոգրադովի ավազամուկ- Meriones Vinogradovi</b>	+	+	+	-	-
60	<b>Տեսակ- փոքրասիական ավազամուկ- Meriones tristrami</b>	+	+	+		+
61	Սեռ օնդատրաներ-Ondatra <b>Տեսակ- օնդատրա- Ondatra Zibethicus</b>	-	+	+	-	+
63	Սեռ մոխրագույն դաշտամկներ Microtus <b>Տեսակ- ձնե դաշտամուկ- Microtus nivialis</b>	+	-	+	+	-
64	<b>Տեսակ- հասարակական դաշտամուկ- Microtus socialis</b>	+	+	+	+	+
65	<b>Տեսակ- սովորական դաշտամուկ- Microtus arvalis</b>	+	+	+	+	+
66	<b>Տեսակ- բիուտային դաշտամուկ- Microtus majori</b>	+	+	+	+	+
67	Սեռ կուրամկնիկներ-Ellobius <b>Տեսակ- սովորական կուրամկնիկ- Ellobius talpinus</b>	+	+	+	+	-
68	Ընտանիք կույր մկներ -Spalacidae Սեռ կույր մկներ - Spalax <b>Տեսակ-ներինգի մանրախլուրդ- Nannospalax Nerhingi</b>	-	+	+	+	-
69	Կարգ նապաստակակերպներ-Lagomorpha <b>Տեսակ- շեկ նապաստակ- Lepus europaeus</b>	+	+	+	-	+
70	Կարգ զիշատիչներ Carnivora Ընտանիք կզաքիսագիների Mustelidae Սեռ ջրասամույրներ (ջրշուներ) Lutra <b>Տեսակ- ջրասամույր (ջրշուն) -Lutra lutra</b>	+	+	+	-	-
71	Սեռ գորշուկներ Meles <b>Տեսակ- գորշուկ -Meles mele</b>	+	+	+	-	-

աղյուսակ 1-ի շարունակությունը						
72	Սեռ կզաքիսներ Martes <b>Տեսակ – քարակզաքիս- Martes foina</b>	+	+	+	+	+
73	<b>Տեսակ-անտառառային կզաքիս- Martes martes</b>	+	+	+	+	+
74	Սեռ խայտաքիսներ Vormela <b>Տեսակ- խայտաքիս- Vormela peregusna</b>	+	+	-	-	-
75	Սեռ աքիսներ Mustela <b>Տեսակ - աքիս- Mustela nivalis</b>	+	+	+	+	+
76	Ընտանիք արջեր Ursidae Սեռ արջեր Ursus <b>Տեսակ – կովկասյան գորշ արջ – Ursus arctos caucasica</b>			+	+	-
77	<b>Տեսակ- անդրկովկասյան (սիրիական) գորշ արջ Ursus arctus syriacus</b>	-	+	+	+	-
78	Ընտանիք կատվազգիներ Felidae Սեռ կատուներ Felis <b>Տեսակ- լուսան- Felis lunx</b>	+	+	+	+	-
79	<b>Տեսակ-եղեգնակատու (խաուս) Felis chaus</b>	+	+	-	-	-
80	<b>Տեսակ- մանուկ- Otocolobus manul</b>	+	+	+	-	-
81	<b>Տեսակ- տափաստանային կամ երկարապոչ վայրի կատու- Felis libyca</b>	+	+	-	-	-
82	<b>Տեսակ- անտառային վայրի կատու – Felis silvestris</b>	-	+	+	-	-
83	Սեռ ընծառույծ Panthera <b>Տեսակ- առաջնավորասիական ընծառույծ- PantheraP pardus</b>	-	-	+	+	-
84	Ընտանիք շնագզիներ Canidae Սեռ շներ Canis <b>Տեսակ- գայլ- Canis lupus</b>	+	+	+	+	+
85	<b>Տեսակ-շնագայլ - Canis aureus</b>	+	+	+	+	+
86	Սեռ աղվեսներ Vulpes <b>Տեսակ – հրապոչ աղվես- Vulpes vulpes</b>	+	+	-	-	-
87	<b>Տեսակ –քուրդիստանյան աղվես- Vulpes kurdistanica</b>	+	+	+	+	+
88	<b>Տեսակ- խաչակիր աղվես- Vulpes Alpherakyi</b>	+	+	+	-	-
89	Ընտանիք բորենիներ Hyaeidae Սեռ բորենիներ Hyaeena <b>Տեսակ - բծավոր բորենի -Hyaena hyaena</b>	+	+	-	-	-
90	Կարգ զոյգ կճղակավորներ-ArtiodactylaԸնտանիք խոզեր Suidae Սեռ խոզեր Sus <b>Տեսակ- վարազներ- (վայրի վարազ) Sus scrofa</b>	+	+	+	-	+
91	Ընտանիք եղջերուներ Cervidae Սեռ իսկական եղջերուներ Cervus <b>Տեսակ - ազնվազեղ եղջերուներ- Cervus elaphus</b>	-	-	+	+	-
92	Սեռ այծյամներ (կխտարներ) Capreolus					

	<i>Տեսակ - այծյամ (կխտար)- Capreolus capreolus</i>	-	+	+	+	-
արդյուսակ 1-ի շարունակությունը						
93	Ընտանիք ցուլեր Bovidae Սեռ խոյեր (ոչխար) Ovis <i>Տեսակ- մուֆլոն (Հայկական ոչխար)- Ovis orientalis</i>	-	-	-	+	-
94	Սեռ այծեր Capra <i>Տեսակ - քեզադարյան այծ -Capra aegagrus</i>	-	+	+	+	-


Միջատակերների կարգում ընդգրկված է կաթնասունների 13,8%-ը, ձեռքաթևավորների՝ 28,7%-ը, կրծողների՝ 29,8%-ը, նապաստակակերպների՝ 1,1%-ը, գիշատիչների՝ 21,3%-ը, կճղակավորների՝ 5,3%-ը:

ԼՂ-ի ֆաունայի համար հայտնաբերվել է մինչ այդ չնշված միջատակերների կարգի 13 տեսակ, որոնցից առավել լայն տարածում ունեն սպիտակափոր (սովորական) ոզնին (*Erinaceus transcausicus* Satunin, 1907) (դիագրամա 1), ռադեի գորշատամը (*Sorex raddei* Satunin, 1895), երկարապոչ սպիտակատամը (*Crocidura guldenstaedti* Pallas, 1811):



### Պիագրամա 1. Սովորական ոզնիների քանակը 1կմ երթուղում

Ֆոնային են հանդիսանում փոքր սպիտակատամը (*Crocidura suaveolens* Pallas, 1811), սպիտակափոր սպիտակատամը (*Crocidura leucodon* Hermann, 1780) և վտանգված են ականջեղ ոզնին (*Hemiechinus auritus* Gmelin, 1770), Շելկովնիկովի կուտորան (*Neomys shelkovnikovi* Satunin, 1913), պստիկ սպիտակատամը (բազմատամ) (*Suncus etruscus* Savii, 1822) (դիագրամա 2):




Պիագրամա 2. Պատիկ սպիտակատամների քանակը 1 կմ երթուղում

ԼՂՀ-ի ֆաունայի ձեռքբաթևավորները ներկայացված են 27 տեսակով՝ նախկինում հայտնի 26 տեսակներին (Հայրապետյան Վ.Տ., 2004) ավելացել է ևս մեկը՝ ջրային կամ Դաուրենտոնի գիշերաչղջիկը (*Myotis daubentoni* Khul, 1819). պայտաքթերի (*Rhinolophidae*) ընտանիք՝ 5, հարթաքթերի (*Vespertilionidae*) ընտանիք՝ 21, ծալքաշուրթերի (*Mollossidae*) ընտանիք՝ 1 տեսակ: Դրանցից առավել տարածված են երկգույն մաշկեղը (*Vespertilio murinus* Linnaeus, 1758) և Կուլիի կամ միջերկրածովային փոքրաչղջիկը (*Pipistrellus kuhli* Kuhl, 1819): Ֆոնային են գաճաճ փոքրաչղջիկը (*Pipistrellus pygmaeus* Leach, 1825) և թզուկ փոքրաչղջիկը (*Pipistrellus pipistrellus* Shreber, 1774): Վտանգված և անհետացման եզրին են գտնվում հարավային պայտաքթիթը (*Rhinolophus euryale* Blasius, 1853), միջերկրածովային պայտաքթիթը (*Rhinolophus blasii* Peters, 1867), լայնականջ ծալքաշուրթ (*Tadarida teniotis* Rafinesque, 1814):


Կրծողների կարգը ներկայացված է 28 տեսակով: Դրանցից առավել տարածված են քնամկների սեռից՝ մեծ քնամուկը (*Glis glis* Linnaeus, 1766), անտառային և դաշտամկների սեռից՝ դաշտամուկը (*Apodemus agrarius* Pallas, 1771), համատերների սեռից՝ սովորական համատերը (*Cricetus cricetus* Linnaeus, 1758): Ֆոնային են՝ մոխրագույն առնետը (*Rattus norvegicus* Berkenhout, 1769), հասարակական դաշտամուկը (*Microtus socialis* Pallas, 1773), սովորական դաշտամուկը (*Microtus arvalis* Pallas, 1779) (դիագրամա 3), անտառային մուկը (*Apodemus sylvaticus* Linnaeus, 1758): Վտանգված կրծողների թվին է պատկանում հնդկական վայրենակերպը (*Hystrix indica* Sykes, 1831):

Նապաստակակերպների կարգի միակ ներկայացուցիչը՝ ռուսական կամ շեկ նապաստակն է (*Lepus europaeus* Pallas, 1778): Նախկինում այն ԼՂ-ի կաթնասունների ֆաունայի առավել խիտ բնակեցված տեսակն էր, ներկայումս հանդիպում է խիստ սահմանափակ թվով, իսկ տարածման համեմատաբար հազեցված վայրը Մարտակերտի շրջանի նախալեռնային գոտին է (դիագրամա 3):



### Դիագրամա 3. Ռուսական կամ Շեկ նապաստակների քանակը 1կմ-ում

ԼՂՀ կաթնասունների 20 տեսակ գիշատիչ են, որոնցից առավել հաճախ հանդիպում են շնագզիների ընտանիքից գայլը (*Canis lupus* Linnaeus, 1758), շնագայլը (*Canis aureus* Linnaeus, 1758), կզաքիսազգիներից՝ աքիսը (*Mustela nivalis* Linnaeus, 1766), կատվազգիներից՝ անտառային վայրի կատուն (*Felis silvestris* Schreber, 1777), լուսանը (*Felis lynx* Linnaeus, 1758): Անհետացման եզրին են գտնվում մանուլը (*Otocolobus manul* Pallas, 1776), առաջավորասիական ընձառյուծը (*Panthera pardus* Linnaeus, 1758), բծավոր բորենին (*Hyaena hyaena* Linnaeus, 1758) (դիագրամա 4):



**Պիագրամա 4. Բճավոր բորենիների քանակը 10 կմ-ում**

Նախկինում Ղարաբաղում լայն տարածված կճակավորների կարգի ներկայացուցիչներից 5 տեսակն էլ՝ վարազը (վայրի խոզ) (*Sus scrofa* Linnaeus, 1758), ազնվացեղ եղջերուն (*Cervus elaphus* Linnaeus, 1758), այծյամը (կխտար) (*Capreolus capreolus* Linnaeus, 1758), անդրկովկասյան վայրի կամ հայկական մուֆլոնը (*Ovis orientalis gmelini* Blyth, 1841), բեզդարյան այծը (*Capra aegagrus* Erxleben, 1777), այսօր չափազանց խոցելի են և ունեն սահմանափակ տարածվածություն: Որոշ վայրերում, ուր նախկինում նրանք սովորական էին, այսօր, բացառությամբ բեզդարյան այծի, գրեթե ամբողջությամբ վերացել են, իսկ մյուսները գտնվում են խոցելի վիճակում:

Ընդհանուր առմամբ վտանգված է կաթնասունների 38 տեսակ, դրանք գրանցված են Ղարաբաղի կենդանիների Կարմիր գրքում (2012):

#### **ՊՈՒՄ Կ. ԼՂ ՖԱՈՒՆԱՅԻՆ ԿԱԹՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԼԱՆԴԱՖՏԱ-ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Ուսումնասիրած 94 տեսակ կաթնասուններից ծ.մ. մինչև 500 մ բարձրությունում կարելի է հանդիպել 72 տեսակ կամ 76,6%-ը, 500-1000 մ-ում՝ 85 կամ 90,4%-ը, 1000-2000 մ-ում՝ 81 կամ 86,2%-ը, 2000 և բարձր՝ 50 կամ 53,2%-ը: Տեսակային առավել նկատելի բազմազանություն

արձանագրվել է լեռնատափաստանային գոտում, իսկ առավել քիչ՝ ալպյան և մերձալպյան գոտում:

Պարզաբանվել է, որ միջատակերների կարգից 3 տեսակ՝ կամ 23,1%-ը, ձեռքաթևավորների կարգից՝ 11 կամ 40,7%-ը, կրծողների կարգից՝ 5 կամ 17,8%-ը, գիշատիչների կարգից՝ 3 կամ 15%-ը, կճղակավորների կարգից՝ 3 կամ 60%-ը ունեն բարձունքային տարածվածության սահմանափակումներ: Մի շարք տեսակներ ուղղահայաց գոտիականությամբ տարածվածության սահմանափակումներ չունեն:

Կիսաանապատային և կիսատափաստանային գոտում (2100կմ<sup>2</sup>) ուսումնասիրված կաթնասունների 10,9%-ը՝ կազմում են միջատակերները, 32,9%-ը՝ ձեռքաթևավորները, 34,2%-ը՝ կրծողները, 1,4%-ը՝ նապաստակակերպները, 22%-ը՝ գիշատիչները, 1,4%-ը՝ կճղակավորները:

Լեռնատափաստանային գոտում (2851,5կմ<sup>2</sup>) ուսումնասիրած կաթնասունների 12,5%-ը կազմել են միջատակերները, 27,5%-ը՝ ձեռքաթևավորները, 31,2%-ը՝ կրծողները, 1,2%-ը՝ նապաստակակերպները, 23,7%-ը՝ գիշատիչները, 3,7%-ը՝ կճղակավորները (աղյուսակ 1): Կիսաանապատային- կիսատափաստանային և լեռնատափաստանային գոտիներում ֆաունայի նմանության գործակիցները համապատասխանաբար կազմել են. 0,235, 0,575, 0,653, 0,026, 0,457, 0,052:

Անտառային գոտում (4450կմ<sup>2</sup>) ուսումնասիրած կաթնասունների մեջ միջատակերները կազմում են 16,4%, ձեռքաթևավորները՝ 26,02%, կրծողները՝ 31,5%, նապաստակակերպները՝ 1,4%, գիշատիչները՝ 20,5%, կճղակավորները՝ 5,5 %:

Ի տարբերություն մյուս գոտիների մերձալպյան և ալպյան գոտիներում (2012,5կմ<sup>2</sup>) կաթնասունների բազմազանությունը համեմատաբար աղքատ է, և ուսումնասիրած կաթնասունների 21%-ը կազմում է միջատակերների կարգը, 15,8%-ը՝ ձեռքաթևավորների, 26,3%-ը՝ կրծողների, 42%-ը՝ գիշատիչների, 10,5%-ը՝ կճղակավորների: Ղարաբաղի ֆաունային բնորոշ 94 տեսակ կաթնասունների մոտ 51%-ը հանդիպում են նաև ազոնալ գոտիներում: Տարբեր լանդշաֆտային գոտիներում կատարված դիտարկումներով և ուսումնասիրություններով պարզվել է, որ միջատակերների կարգի անապատ-կիսաանապատային գոտում (մինչև 500մ) հայտնաբերած 8 տեսակից հազվագյուտ է՝ 2 կամ 25% ( աղյուսակ 2), ձեռքաթևավորների կարգի 22 տեսակից՝ 10 կամ 45,5% (աղյուսակ 3):

**Տարբեր բարձրություններում հայտնաբերված միջատակերները**

	Տեսակներ	մինչև 500	500- 1000	1000- 2000	2000 և ավել
1	սովորական ոզնի - <i>Erinaceus europaeus</i>	18	30	5	-
2	ականջեղ ոզնի - <i>Hemiechinus auritus</i>	6	15	9	
3	կովկասյան խլուրդ - <i>Talpa caucasica</i>	-	4	6	3
4	փոքր կամ կույր խլուրդ - <i>Talpa coeco</i>	5	25	23	2
5	կովկասյան գորշատամ - <i>Sorex caucasica</i>	-	8	20	15
6	Ռադդեի գորշատամ - <i>Sorex Raddei</i>	14	30	25	3
7	փոքր գորշատամ - <i>Sorex minutes</i>	30	45	20	19
8	Շելկովնիկովի կուտորա - <i>Neomys Schelkovnikovi</i>	-	10	-	-
9	պստիկ սպիտակատամ - <i>Suncus etruscus</i>	16	10	-	-
10	երկարապոչ սպիտակատամ- <i>Crocidura guldenstaedti</i>	-	30	46	20
11	փոքր սպիտակատամ - <i>Crocidura suaveolens</i>	23	40	30	27
12	սպիտակափոր սպիտակատամ- <i>Crocidura leucodon</i>	25	40	25	16
13	արևելապարսկական սպիտակ- ատամ - <i>Crocidura zarudnyi</i>	-	15	13	-
Ընդամենը տեսակ և %		8-61,5	13-100	11-84,6	8- 61,5
Ընդամենը հայտնաբերված և %		137- 17,9	302-39,4	222-29	105- 13,7

Տարբեր բարձրություններում հայտնաբերված ձեռքաթևավորները

	Տեսակներ	մինչև 500	500- 1000	1000- 2000	2000 և ավել
1	մեծ պայտաքիթ - <i>Rhinolopus ferrumequinum</i>	34	30	12	5
2	փոքր պայտաքիթ - <i>Rhinolopus hipposideros</i>	25	35	19	-
3	Մեհելիի պայտաքիթ - <i>Rhinolopus Mehelyi</i>	12	50	40	-
4	հարավային պայտաքիթ - <i>Rhinolopus euryale</i>	9	5	4	-
5	միջերկրածովային պայտաքիթ- <i>Rhinolopus Blasii</i>	-	3	2	-
6	Բեխստեյնի գիշերաչղջիկ - <i>Myotis Bechsteini</i>	4	15	-	-
7	սրականջ գիշերաչղջիկ - <i>Myotis Blythi</i>	40	58	30	16
8	Նատտերիի գիշերաչղջիկ - <i>Myotis Nattereri</i>	3	12	-	-
9	եռագույն գիշերաչղջիկ - <i>Myotis emarginatus</i>	6	22	-	-
10	բեղավոր գիշերաչղջիկ - <i>Myotis mystacinus</i>	42	20	10	-
11	Ղաուբենտոնի գիշերաչղջիկ - <i>Myotis Daubentoni</i>	-	5	3	-
12	սովորական երկարաթև - <i>Myotis Schreibersii</i>	35	46	25	-
13	գորշ ականջեղ - <i>Plecotus auritus</i>	7	3	2	-
14	մոխրագույն ականջեղ - <i>Plecotus austriacus</i>	-	17	3	-
15	եվրոպական լայնականջ- <i>Barbastella barbastellus</i>	5	4	3	-
16	սափական լայնականջ - <i>Barbastella leucomelas</i>	4	13	2	-
17	փոքր իրիկնաչղջիկ - <i>Nyctalus leisleri</i>	-	6	1	-
